**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ՀՄԱԱՊՁԲ-25/170-1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. դեկտեմբերի 18-ին կնքված N ԵՄ-ՀՄԱԱՊՁԲ-25/170-1 ծածկագրով պայմանագրում 2026թ. հունվարի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Ալեռտո» ՍՊԸ-ի միջև 2025թ. դեկտեմբերի 18-ին կնքված N ԵՄ-ՀՄԱԱՊՁԲ-25/170-1 պայմանագրի կատարման ժամկետի փոփոխության անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն՝** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի, «Ալեռտո» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև N 1 համաձայնագիրը կնքվել է 2025 թվականի դեկտեմբերի 26-ին, սակայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ապրանքի» «Մատակարարման» «Ժամկետը***» սահմանված է «…ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատակարարումն իրականացվելու է մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը», ինչի արդյունքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի «ը» ենթակետով սահմանված պահանջները, Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ապրանքի» «Մատակարարման» «Ժամկետը***» սյունակը խմբագրվել և ներկայացվել է նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «…ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և մատակարարումն իրականացվելու է 20 օրացուցային օրվա ընթացքում»:

**Փոփոխության հիմնավորում՝** Պայմանագրի 1.1 և 8.5 կետերի համաձայն:

**Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**